

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ

1. ԱՆՆԵՐՆԻ ՄՆԵՂԸ Կ. Վ. 435
2. ԲՈՒԹԵԱՆ ԽՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՆԱՐՄԱՆ ՄԵՐ ԵՆ ՄԻՆԻՍԿ- 435
- րեան Նայերի ունեցած Նայեացքը Կ. Վ. . . 469
5. ԵՆԵՂԵՑՆԵՆ ԶՐՈՒԿՈՒՆ Ն. Զ. . . 469

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԵՏԱԿԱՆ

4. Գարուն (բանաստեղծութիւն) Յ. Յովհաննիսեան 468
- 4 Համամ Արեւելցի Կ. Կոստանեան 469
6. Համեմատական տախտակ Պատմ. Աղուանից 476
- Մ. Կաղանկատ. եւ զից թղթոց (վերջ) Դ. Վ. 476
7. ՄԱՏԵՆԱՅՈՍՈՒԹԻՒՆ Երզնան Յ. Մալխ. Փիմի 479

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

8. Արդի վիճակ Հաղահայոց. Թ. Գ. Դ. Զուլալեցի 480
- 9 Դերքիմ (Եարունակութիւն) Ն. Ս. Հայկունի 485

ԱԶԳԱՅԻՆ

10. ՔԱՎԱՆՆԵ — ՈՒՍՈՒՑԻՉ 483
11. ԵՆԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ 487
- Մայր Աթոռ
12. Երեւանի թեմ.
13. Վրաստանի թեմ.
14. Ասորականի թեմ.
- ՏԱՎԱՆԱՅԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

- ՅԱՆԼՈՒՄԺ.
- Յովհան Օմեցու Ճառք. 492
- Անանիա Երեւակցի (Եարունակութիւն) Գ. Տ. Մ. 499
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
- ՄԱՏԵՆԱՅՈՍՈՒԹԻՒՆ
- ՅԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՅԱՆԼՈՒՄՄ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ., ԱՊՐԻԼ.

Եովհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի խոստովանութիւնն անշարժ յուսոյ մարմնաւոր Բանին Զրիստոսի եւ ընդդէմ դաւանողաց զմի Զրիստոս յերկուս ընտրութիւնս:

Չաստուածաբանութիւնն աստուածածնելութեան Բանին Հօր ոչ ոմանք ստոյգ հաւատոց այժմ ստորագեն՝ զայն որ ի հայրական ծոցոյ եւ ի թափանցիկ լուսոյ եւ ի գերազանցեալ փառացն ի թանձրագիտակ մարդկայինս բնութիւն ի խնարհ թափեալ եւ քաղաքաւորեալ յայտնեցաւ պողաբերել հեթանոսաց եկեղեցւոյ եւ ոչ ուղղակի գաւաննն ըստ ինքնագիտաբար աւետարանին քարոզիցն, յորմէ հանգիսի հաղորդութիւն մարդկութեանրս առ Աստուածութիւնն. եւ ոչ զաստուածային շնորհացն բազմապատիկ պարգևս եւ զմեծ եւ զփրկական զխորհուրդն յինքեանս նախատպաւորեն ըստ զեղմանն անձրեւահոս ցոյցոյ որ ոռոգեացն զանպտղութիւն մարդկան ի կռապարիշան երաշտութենէ՝ բոլորջեալ բուրեն ընդհանրական եկեղեցւոյ. այլ քակեալ միանգամայն իսկ զհիմն ուղղափառ հաւատոյ, եւ հայեցեալք յայս մարտութիւն եւ ի վարդապետութիւնս գիւտոյ եւ հարեալք իւրեանց խղճի մտօք զթանձր մորուս յառաջ ձգեն որ յաղաքողոնս պերճացեալ պա-

ճուճին եւ բարձրայօն պարծին ըստ սակի ամբարտաւանից, եւ զեղեղումն մտաց զինկամութեան ի գործ արկեալ վրիպումն գլորման ճաշակեն, ոչ ստորաբնելով զթագուցեալն ի նմա դառնագոյն քան զլեղի մախանացն բոց, յորմէ յղացեալ ծնանի նոցա զանազան եւ զարտմաբեր հերետիկոսութիւնս:

Այսպէս օտարացեղութիւն սոցա ի մէջ առեալ եւ յաւեւ բացընկեցիկ յուղղափառ աւանդիցն լեալ եւ զհիւսակս Գ. կղիս սուրբ Ժողովոցն խղել հանգիսացեալ որ ի Նիկիայ Բիւթանացոց սակս Արիսի եւ որ ի Կոստանդնուպոլիս վասն հոգեմարտին Մալեդոնի եւ որ յԵփեսոս յԱսիայ յաղագս յիմարութեան նետորի, եւ մտախաբ իմացուածիւ ըստ գօղծնի օցտողաց եւ ի բարեւոյն վրիպեցուցանողաց հակաճառին ընդդէմ ճմարտութեանն ըստ նետորականացն իմացմանց, եւ յետ անճառ միաւորութեան Բանին եւ մարմնոյն երկուս բնութիւնս բաժանարար սահմանեն ի մի Տէր Յիսուս Քրիստոս, երկուս կամն եւ երկուս ներգործութիւնս, եւ ոչ մարդացելոյն Աստուծոյ ի սրբոյ կուսէն խոստովանին զկիրս, այսինքն ըզխաջ եւ զմահ որ վասն յաշխարհի այլ յատուկ մարդոյն միայնոյ, եւ եթէ զարգարեալն եւ խաչեալն ոչ է Տէր եւ ոչ Փրկիչ եւ ոչ Աստուած եւ որդի Աստուծոյ, Այսպէս ի ներքս ի խորջ անդ զմիտս ամբարշտութեան ցուցեալ յափշտակեն զոկարտ, գիտութեամբ ի հրապուրանս բանից արկանելով եւ արբուցանեն կղերց եկեղեցւոյ զպղտորութիւն մարտութեան եւ զհակառակաբանութիւնս յոչինչ պիտանացու: Եւ զոր խարգախութեամբն թագուցանել համարին, զնոյն յայտնապէս ցուցանեն զմիւր միտս եւ զհերետիկոս լեզուագարութիւնս, զոր ոչ ասել իսկ պարտ վարկանի եկեղեցի ուղղափառաց եւ ոչ լսել վասնզի յաւեւ իմն հեռի եւ օտար եւ ի բացեայ է յառաքելական վարդապետութիւնէ:

Ասկայն մեք աստանօր ոչ պարտիմք լուծութիւն միայն պատուել զի մի ի հակառակաց մեղիցիմք, կամ թէ երկբանութիւն ինչ ի մէջ անկցի կամ մեծաբանութիւն, կամ թէ պատճառս ինչ տրամբման գտեալ եւ ևս առաւել զհրաբորբն բղինն չարութիւն եւ անեցուցեն զզրժոխիմքեր զգայումն: Այլ ընդգիմացուք նոցա ուղղափառ հաւատոց մարտիւ եւ սանձահարեալ հանգիսացուք զխոտերախ խորդաւանս հերձուածողութեան եւ վերջատանջել զյոգնահոս եւ զբազմատարած գիշերա-